

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՁԱՆ
2017թ., հունիսի 21-22

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ **50** ԱՄՅԱԿԻՆ

Հարգելի ուսանողներ և դասախոսներ,

Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը հրավիրում է մասնակցելու Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական ուսանողական գիտական առաջին նստաշրջանի աշխատանքներին, որը տեղի կունենա 2017թ. հունիսի 21-22-ը հետևյալ հասցեով՝ ք. Գորիս, ԳՊՀ, գլխավոր մասնաշենք, հանդիպումների սրահ (հունիսի 21) և ԳՊՀ, 2-րդ մասնաշենք, լս.՝ 2303 և 2402 (հունիսի 22):

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Նախագահ՝	Դինուց Ա.Ս. (ֆ.մ.գ.թ., դոցենտ)
Քարտուղար՝	Գյուրջյան Մ.Հ. (ԲՄՖ ՈւԳԸ նախագահ)
Անդամներ՝	Աթաբեկյան Լ.Վ. (ք.գ.թ., դոցենտ), Ալավերդյան Ս.Կ. (ԳՊՀ ՈւԳԸ նախագահ), Անդրիյան Ա.Ս. (ԳՊՀ ՈւԽ նախագահ), Առստամյան Մ.Ֆ. (ԲՄՖ ՈւԳԸ քարտուղար), Բալասանյան Ա.Ա. (ԲՄՖ ՈւԽ նախագահ), Գալստյան Ա.Գ., Դավթյան Ա.Վ. (ֆ.մ.գ.թ.), Հովակիմյան Հ.Ս. (ԲՄՖ ՈւԳԸ նախագահի տեղակալ), Շալունց Շ.Վ. (կ.գ.թ.), Վարդանյան Լ.Ռ. (ք.գ.դ., դոցենտ)

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հունիսի 21 ԳՊՀ, գլխավոր մասնաշենք, հանդիպումների սրահ	11 ¹⁵ Մասնակիցների գրանցում 12 ⁰⁰ Բացում 12 ³⁰ Լիագումար նիստ 13 ¹⁵ Մուրճի ընդմիջում 13 ³⁰ Բնագիտատեխնիկական էքսպո-ցուցադրություն. վարպետության դաս
Հունիսի 22 ԳՊՀ, 2-րդ մասնաշենք, լս.՝ 2303 և 2402	10 ⁰⁰ Աշխատանք բաժանմունքներում 13 ⁰⁰ Փակում

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳ

-Հոդվածի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր զեկուցողին տրվում է 15 րոպե ժամանակ,
-Զեկուցողին հարցեր տալու և պատասխանների համար տրվում է մինչև 5 րոպե ժամանակ:

Հարգելի ուսանողներ և դասախոսներ,

2017թ.-ը հորեյանական տարի է Գորիսի պետական համալսարանի համար. լրանում է համալսարանի հիմնադրման 50-ամյակը: Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետն իր ծանրակշիռ աշխատանքն է կատարել համալսարանի գոյության 50 տարիների ընթացքում: Տարբեր տարիներին գիտաուսումնական գործունեություն ծավալել և այդ գործունեությանը տարբեր առիթներով նպաստել են Ա.Լ. Շահինյանը, Ս.Ն. Մերգելյանը, Շ.Ն. Սահակյանը, Ս.Ա. Հակոբյանը, Վ.Ց. Գնունին, Լ.Հ. Մինասյանը, Ջ.Ս. Սաֆրազբեկյանը, Ա.Ն. Մարտիրոսյանը, Ա.Գ. Բագդոնը, Յու.Ս. Սաֆարյանը, Ռ.Լ. Վարդանյանը, Հ.Ս. Մալինցյանը, Վ.Ռ. Նարինյանը, Ե.Գ. Բաղդասարյանը և ուրիշներ: Ֆակուլտետում գործում է երկու ամբիոն (Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, Կենսաբանության և քիմիայի) և մեկ սեկտոր (Ֆիզիկայի): Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների հինգ դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների մեկ դոկտոր-դոցենտ, գիտությունների ութ թեկնածու-դոցենտներ, գիտությունների երկու թեկնածուներ: Աշխատակիցներն իրենց հետազոտությունների մասին զեկուցումներով պարբերաբար հանդես են եկել և շարունակում են հանդես գալ միջազգային և հանրապետական գիտաժողովներում (Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Բարնաուլ, Բիշքեկ, Խարկով, Ռոստով, Օդեսա, Վորոնեժ, Կրասնոդար, Ուֆա, Մինսկ, Ծաղկաձոր, Երևան, Գորիս, Ստեփանակերտ): Հրատարակվել են 300-ից ավելի գիտական հոդվածներ ազգային և արտասահմանյան մասնագիտական ամսագրերում: Աշխատակիցներն ընդգրկված են եղել ֆինանսավորվող գիտական թեմաներում: Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնը ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ն. Մարտիրոսյանի ղեկավարությամբ 1993-1998թթ. ստանձնել էր պետականորեն ֆինանսավորվող գիտահետազոտական աշխատանքների պատվեր և հաջողությամբ իրականացրել այն: Ամբիոնը երեք տարին մեկ պարբերականությամբ հանդիսանում է «Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության դինամիկայի պրոբլեմները» թեմայով միջազգային գիտաժողովի համակազմակերպիչ՝ ընդգրկելով ուսանողներին, դասախոսներին:

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ. Ռ.Լ. Վարդանյանի պրպտող միտքը և աշխատասիրությունն ընդլայնել են Կենսաբանության և քիմիայի ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների աշխարհագրությունը: Ամբիոնը սերտ կապեր է հաստատել ՌԴԳԱԱ Ն.Ն. Սեմյոնովի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի, ՌԴԳԱԱ Ն.Ս. Էմանուելի անվան Կենսաքիմիական ֆիզիկայի ինստիտուտի կինետիկայի լաբորատորիայի (պրոֆեսոր Ե.Տ. Դենիսով), ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի, ԵՊՀ Քիմիական ֆակուլտետի և ԱՊՀ երկրների այլ գիտահետազոտական ինստիտուտների հետ: Սկսած 1984 թ.-ից՝ Ռ.Լ. Վարդանյանի ղեկավարությամբ Գորիսում պարբերաբար կազմակերպվել են հեղուկաֆազ օքսիդացման ռեակցիաների մեխանիզմների պարզաբանմանը նվիրված միջազգային գիտաժողովներ:

Ֆակուլտետի գիտահետազոտական գործունեության մեջ իր որոշակի դերակատարությունը պետք է ունենա նորընտիր ֆակուլտետային ՈւԳԸ-ն: Համալսարանի հիմնադրման 50-ամյակը փայլուն առիթ է՝ ֆակուլտետի գիտական հանրությանը մեկտեղելու և ուսանողների շրջանում գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու համար:

Լիահույս եմ, որ գիտական նստաշրջանը կունենա իր շարունակությունը:

Գիտական նստաշրջանի աշխատանքներին մաղթում եմ արդյունավետ և հաջող ընթացք:

Ա.Ս. Դինունց
Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի
ղեկանի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ

Հարգելի մասնակիցներ,

Ողջունում եմ ձեզ ուսանողական գիտական նստաշրջանին մասնակցելու առթիվ, որը նվիրված է ԳՊՀ-ի հիմնադրման 50-ամյակին: Ուսանողի կյանքում իր ուրույն տեղը և նշանակությունն ունի գիտահետազոտական աշխատանքը, որտեղ երևում են ուսանողի գիտելիքներն ու գիտական աշխատանք կատարելու հմտությունները: Այդ նպատակով ԲՄՖ ՈՒԳԸ-ն իրականացնում է գիտական և գիտաճանաչողական բնույթի տարբեր միջոցառումներ, որոնց շարքում, ինչ խոսք, առավել նշանակալիցը հոբելյանական գիտական նստաշրջանի անցկացումն է: Ֆակուլտետում գումարվող առաջին նստաշրջանը հետազոտական աշխատանքի փորձի լավագույն սկիզբը կարող է լինել: Ոչ ոք չի կարող ստիպել մարդուն դառնալ հանճար: Բայց օգնել, որ ուսանողական տարիներին ստեղծագործական նախաձեռնությունները նախանշվեն և զարգացվեն, դա մենք կարող ենք:

Հոբելյանական գիտական նստաշրջանը երկօրյա է: Առաջին օրվա աշխատանքները կլինեն գիտագործնական բնույթի, իսկ երկրորդ օրվա աշխատանքները կկատարվեն երկու բաժանմունքներում: Ձեկուցմամբ հանդես է գալու 14 մասնակից:

Մասնակցության հայտերի ընդունման գործընթացին զուգահեռ մենք հավաքել ենք նաև զեկուցումների ամբողջական տարբերակները՝ հետագայում դրանց տպագրության գործընթացը կազմակերպելու համար: Գիտական նստաշրջանի ավարտից հետո մասնակիցներին տրվելու է մեկ շաբաթ ժամանակ՝ աշխատանքում լրամշակումներ կատարելու համար: Այդուհանդերձ, տպագրվելու են ոչ թե բոլոր զեկուցումները, այլ միայն այն աշխատանքները, որոնք տպագրության կերաշխավորվեն ֆակուլտետի խորհրդի կողմից:

Ես վստահ եմ, որ նստաշրջանի մասնակիցները զեկույցների մեջ կգտնեն իրենց համար օգտակար և հետաքրքիր թեմաներ: Հուսով եմ, որ աշխատանքները բաժանմունքներում կլինեն արդյունավետ և կառուցողական՝ նոր հետազոտությունների համար:

Մաղթում եմ Ձեզ արգասաբեր աշխատանք և ստեղծագործ մտքի «փայլատակումներ»:

Մ.Հ. Գյուրջյան
Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի
ուսանողական գիտական ընկերության նախագահ

ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ	
12 ⁰⁰ – 12 ³⁰	<p>Բացման խոսք՝ Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ս. Դինունց</p> <p>Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մ.Հ. Գյուրջյան</p> <p>Ողջույնի խոսք՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզ. մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ա. Ղուկասյան</p> <p>Կենսաբանության և քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, քիմ. գիտությունների դոկտոր Ռ.Լ. Վարդանյան</p> <p>Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ. մաթ. գիտությունների դոկտոր Ա.Ն. Մարտիրոսյան</p> <p>Գորիսի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախագահ Ս.Կ. Ալավերդյան</p>
12 ³⁰ – 13 ¹⁵	<p>ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍ</p>
	<p>Մաթեմատիկական մեթոդների կիրառումը բնության տարբեր երևույթները նկարագրող պարզագույն մոդելների կառուցման և դրանց հետազոտման մեջ <i>զեկ. ֆ.մ.գ.թ. Ա.Վ. Դավթյան</i></p> <p>Դեղաբույսերից ստացված էքստրակտների հակաօքսիդիչ-հակառադիկալային հետազոտություններ <i>զեկ.՝ ք.գ.դ, դոցենտ Լ.Ռ. Վարդանյան</i></p>
13 ¹⁵ – 13 ³⁰	<p>ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ</p>
13 ³⁰ – 14 ³⁰	<p>ԲՆԱԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԷՔՍՊՈ-ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ �ԱՍ</p>
	<p>Աշխատանք 3-D պրինտերի հետ Գործնական ցուցադրություն՝ լաբորատոր փորձեր</p>


ԱՇԽԱՏԱՆՔ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐՈՒՄ

<p><i>ԳՊՀ, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ, 2303 լսարան</i></p>	<p>ԲԱԺԱՆՍՈՒՆՔ I ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ <i>Նախագահող՝</i> <i>Ֆ.մ.գ.թ. Ա.Վ. Դավթյան</i></p>
<p>10⁰⁰ – 10²⁰</p>	<p>Միջառարկայական կապերը մաթեմատիկայի և ֆիզիկայի դասընթացների միջև</p> <p><i>Ա.Ս. Անդրիյան, Մաթեմատիկա, 4-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Ղուկասյան</i></p>
<p>10²⁰ – 10⁴⁰</p>	<p>Պարամետր պարունակող խնդիրների լուծման գրաֆիկական մեթոդը</p> <p><i>Ա.Ա. Խաչատրյան, Մաթեմատիկա, 4-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ն. Մարտիրոսյան</i></p>
<p>10⁴⁰ – 11⁰⁰</p>	<p>Եռանկյունաչափական անհավասարումների լուծման ոչ ստանդարտ մեթոդներ</p> <p><i>Ա.Ս. Հարությունյան, Մաթեմատիկա, 2-րդ կուրս, մագիստրոս գիտ. դեկ.՝ ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Դինունց</i></p>
<p>11⁰⁰ – 11²⁰</p>	<p>Անդրադարձ խնդիրներ</p> <p><i>Ա.Ա. Բալասանյան, Մաթեմատիկա, 3-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ ֆ.մ.գ.թ. Ա.Վ. Դավթյան</i></p>
<p>11²⁰ – 11⁴⁰</p>	<p>Գրադարանային ավտոմատացված տեղեկատվական KOHA համակարգը</p> <p><i>Թ.Ս. Վանյան, Մաթեմատիկա, 2-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Ա.Յ. Օրդյան</i></p>

<p>ԳՊՀ 2-րդ մասնաշենք, 4-րդ հարկ, 2402 լսարան</p>	<p align="center">ԲԱԺԱՆՄՈՒՆՔ II ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Համանախագահողներ՝ Ք.Գ.Թ., դոցենտ Լ.Վ. Աթաբեկյան Կ.Գ.Թ. Շ.Վ. Շալունց</p>
<p>10⁰⁰ – 10²⁰</p>	<p>Էկոլոգիական գործոնների ազդեցությունը հակաօքսիդիչների կուտակման դինամիկայի վրա <i>Ս.Հ. Գյուրջյան, Կենսաբանություն, 2-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Ք.Գ.Թ., դոցենտ Լ.Վ. Աթաբեկյան</i></p>
<p>10²⁰ – 10⁴⁰</p>	<p>Բնակլիմայական պայմանների ազդեցությունը բույսերում ֆենոլային միացությունների և ֆլավոնոիդների կուտակման վրա <i>Ս.Ս. Վանյան, Դեղագործական քիմիա, 2-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Ք.Գ.Թ., դոցենտ Լ.Վ. Աթաբեկյան</i></p>
<p>10⁴⁰ – 11⁰⁰</p>	<p>Օղակավոր որդերի էվոլյուցիոն առանձնահատկությունները և գործնական նշանակությունը <i>Բ.Հ. Պետրոսյան, Կենսաբանություն, 2-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Կ.Գ.Թ., դոցենտ Հ.Ս. Սաֆարյան</i></p>
<p>11⁰⁰ – 11²⁰</p>	<p>Միներգիզմի և անտագոնիզմի երևույթները օքսիդացման պրոցեսում տարբեր բույսերի էքստրակտների կիրառության ժամանակ <i>Ս.Տ. Հովհաննիսյան, Դեղագործական քիմիա, 4-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Ք.Գ.Թ., դոցենտ Լ.Ռ. Վարդանյան</i></p>
<p>11²⁰ – 11⁴⁰</p>	<p>Ջրիմուռների նշանակությունը <i>Ս.Ֆ. Առստամյան, Կենսաբանություն, 1-ին կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Կ.Գ.Թ., դոցենտ Հ.Ս. Սաֆարյան</i></p>
<p>11⁴⁰ – 12⁰⁰</p>	<p>Ինտերակտիվ մեթոդների դերը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացում <i>Հ.Ռ. Արզումանյան, հատուկ մանկավարժ, Գորիսի Յու. Բախշյանի անվան N3 հիմնական դպրոց գիտ. դեկ.՝ Տ.Ս. Գրիգորյան</i></p>
<p>12⁰⁰ – 12²⁰</p>	<p>Գորիսը սնուցող ջրամբարների ջրի քիմիական կազմի առանձնահատկությունները <i>Ս.Ս. Հակոբյան, Դեղագործական քիմիա, 4-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Ք.Գ.Թ., դոցենտ Լ.Ռ. Վարդանյան</i></p>
<p>12²⁰ – 12⁴⁰</p>	<p>Վիտամին B₁-ի կենսասինթեզ <i>Ս.Ս. Օհանջանյան, Կենսաբանություն, 1-ին կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Կ.Գ.Թ., դոցենտ Հ.Ս. Սաֆարյան</i></p>
<p>12⁴⁰ – 13⁰⁰</p>	<p>Անդրադարձ իմացական որոշ գործընթացների ֆիզիոլոգիական հիմունքներին <i>Բ.Հ. Պետրոսյան, Կենսաբանություն, 2-րդ կուրս, բակալավր գիտ. դեկ.՝ Կ.Գ.Թ., դոցենտ Ն.Ս. Հախվերդյան</i></p>

13⁰⁰ – 13³⁰

ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



**ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի (այսուհետ՝ ԲՄՖ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) ֆակուլտետի ուսանողներին և երիտասարդ դասախոսներին միավորող ֆակուլտետային ստորաբաժանում է, որի նպատակն է.

- ✚ նպաստել ուսանողության գիտական և ստեղծագործական մտքի զարգացմանը,
- ✚ սատարել կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողական նախաձեռնությունները,
- ✚ արտահայտել և պաշտպանել մասնագիտական շահերը,
- ✚ ստեղծել կապեր գիտական և հետազոտական այլ կենտրոնների հետ,
- ✚ կազմակերպել ուսանողական գիտական աշխատանքների ու այլ նյութերի հրատարակման աշխատանքները:

2017թ. մարտի 2-ին ձևավորվել է ԲՄՖ ՈՒԳԸ խորհուրդ: Այժմ ԲՄՖ ՈՒԳԸ-ն կանոնակարգված աշխատող ուսանողական կառույց է, և նրան անդամակցում է շուրջ 57 ուսանող:

ԲՄՖ ՈՒԳԸ շրջանակներում այս ընթացքում կազմակերպվել է գիտաճանաչողական ուղղվածությամբ մեկ միջոցառում:

Հետադարձ կապ.

Հեռախոս՝ (098) 19-67-04, (093) 93-75-36

E-mail: ugy.bmf@gmail.com

Ֆեյսբուքյան էջ՝ ԳՂՀ Բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետ /GSU Faculty of SNS